ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/68

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Արպանիվ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Հակոբյանի,
Պատվիրատու՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Լաճիկյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.05.2019թ. թիվ 26/26-1/8974-2019 գրությամբ «Արպանիվ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 29.05.2019թ. թիվ 01/359-19 գրության հիման վրա, 30.05.2019թ. «Արպանիվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն 29.05.2019թ. թիվ 01/359-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով անվադողերի գնման ընթացակարգում «Արպանիվ» ՍՊԸ-ն 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետով՝ «Արպանիվ» ՍՊԸ-ին առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն, սակայն վերջինիս կողմից հիշյալ ընթացակարգի հրավերով սահմանված կարգով փաստաթղթեր չեն ներկայացվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են վերը նշված կազմակերպությունների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Արպանիվ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 31.05.2019թ. գրությամբ դիմել է «Արպանիվ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.05.2019թ. թիվ

26/26-1/8974-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի մայիսի 31-ին մեր ընկերության էլեկտրոնային փոստին ստացվել է ծանուցում, առ այն, որ ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2019թ. թիվ 26/26 1/8974-2019 գրությամբ «Արպանիվ» ՄՊԸ-ի հանդեպ հարուցվել է ընթացակարգ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ինչի հետ կապված հայտնում եմ Ձեզ, որ սույն թվականի ապրիլի 11-ին ոչ ավտոմատ ծանուցման եղանակով info@armcps.am էլ. Փոստից arpaniv@mail.ru փոստին ստացել ենք ծանուցում, առ այն, որ մեր կազմակերպությունը 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել և առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ԵՁԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/47 ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, կից ներկայացնում եմ մեր էլ. Փոստի մուտքային /inbox/ նամակների էջի /Print Scroll/ տպված էջը /տես նկար 1/, որից հետո մեր կողմից համաձայն «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշման 43-րդ կետի 4-րդ ենթակետի և հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնի պահանջի 13.04.2019թ. ին ժամը 17:47 րոպեին, հրավերում նշված էլ. Փոստին lachgroup.procurement@gmail.com/ մեր կողմից ուղարկվել է պահանջվող փաստաթղթերը՝ Հավելված 6 և Հավելված 6.1-ը էլէկտրոնային ստորագրությամբ, որոնք ևս կցվում են, ինչպես նաև ի ապացույց այն բանի, որ մեր կողմից վերոհիշյալ պարտավորությունը կատարվել է ժամանակին՝ այսինքնս սահմանված 3 աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնում եմ մեր էլ. Փոստի ելքային /sent items/ նամակների էջի /Print Scroll/ տպված էջը /տես նկար 2/, որտեղ երևում է թե երբ, ումից և ում է գնացել նամակը, պատրաստ ենք այն նաև տեղում ցույց տալ:

Վստահ լինելով, որ ամեն ինչ նորմալ է. ես, որոշակի ժամանակ անց՝ երբ արդեն անցել էր սահմանված ժամկետը և որ սովորաբար պետք է մեզ ուղղարկվեր ծանուցում պայմանագրի ապահովում ներկայացնելու համար կամ արձանագրությունը, որտեղից հնարավոր կլիներ տեղեկություն ստանալ արդյունքների մասին, gnumner.am կայքից փորձել եմ գտնել ԵՁԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/47 ծածկագրով նիստերի արձանագրությունները, գտնելով դրանք, բեռնել եմ RAR ֆայլով, սակայն երբ փորձել եմ բացել էկրանին հայտնվել է սխալի զգուշացում և ֆայլը չի բացվել, այնուհետև զանգահարել եմ հրավերում նշված 010 262 269 հեռախոսահամարով և քարտուղարից փորձել եմ ճշտել թե ինչու է ուշանում

պայմանագրի կնքումը, քարտուղարը ինձ պատասխանեց, որ մրցույթը չեղարկվել է. ես հարցրեցի պատճառը և նա առանց պատճառ չնշելով ասաց որ մրցույթը կվերահայտարարվի ն քանի-որ նշվեց չեղարկվել է բառը, իմ մոտ ընդհանրապես կասկած չառաջացավ, որ դա կարող է լինել մեր հայտը մերժելու հիմքով, և 07.05.2019թ.-ին վերահայտարարվեց նույն մրցույթը ուդղակի մեկ չափաբաժնով ավել, որին մենք ևս մասնակցեցինք, որը ևս չեղարկվել է, այս անգամ մինչև 2 րդ փուլ հասնելը:

Ներկայումս ստացվել է մի իրավիճակ, որ մեզ չի ուղղարկվել ծանուցում այն մասին, որ մեզ մերժել են քանի-որ 2-րդ փուլի փաստաթղթերը չեք աղղարկել, իսկ այդ մասին մենք իմացել ենք վերը նշված ծանուցումից, իսկ թե ինչու մեր կողմից 2-րդ փուլի նամակը չի հասել պատվիրատուին, չեմ կարող ասել, բայց-որ մեր կողմից այն ժամանակին ուղղարկվել է, դա հաստատ է և ի շնորհիվ էլ. փոստի ընձեռած հնարավորությունների դա տեսանելի փաստ է, իսկ եթե ժամանակին ծանուցված լինեինք մենք հնարավորություն կունենանք պաշտպանելու մեր շահերը, քանի-որ մենք հերիք չի զրկվել ենք 1 351 128 /մեկ միլիոն երեք հարյուր հիսունմեկ հազար մեկ հարյուր քսանութ/ ՀՀ դրամ ապրանք մատակարարելու պայմանագիր կնքելու իրավունքից, այլ նաև վտանգ կա որ 2 /երկու/ տարի ժամկետով կարող ենք հայտնվել ԵԱՏՄ սև ցուցակում, ինչը մեծ վնաս կհասցնի թե մեր ընկերության շահերին և թե պետության շահերին, այն իմաստով, որ ի դեմս մեր ընկերության կորցնելու է վստահելի զործընկերոջ, ինչը ապացուցված է բազմամյա աշխատանքային փորձով:

Հարգելի պարոն Օհանյան, «Արպանիվ» ՍՊԸ-ն 2006թ.-ից մասնակցում է պետության կարիքների համար գնվող ապրանքների գնման գործընթացներին, այս ժամանակահատվածում մեր ընկերության կողմից մատակարարվել են մի քանի միլիարդ ՀՀ դրամի ապրանքներ և չի եղել մի դեպք, որ մեր հետ պայմանագիր խզվի, կամ նման գործընթաց նախաձեռնվի, ընդ որում միայն այս տարի մինչ օրս ունենք 36 /երեսունվեց/ մասնակցություն ավարտված գնման գործընթացների, որտեղ մեր ընկերությանը շնորհվել է պայմանագրի կնքում, այսինքն բոլոր փուլերը հետևողական և բարեխիղճ կատարվել է մեր կողմից, ինչը կարող են ստուգել հենց gnumner.am, armeps.am համակարգերի միջոցով, պատվիրատուների կողմից ունենք բազմաթիվ շնորհակալական նամակներ և տեղեկանքներ ապրանքների ժամանակին և որակյալ մատակարարելու վերաբերյալ անհրաժեշտության դեպքում կարող եմ ներկայացնել, իսկ այս ընթացակարգը ըստ էության քննում է մասնակցի այսինքնս մեր վարքագիծը կոնկրետ գնման գործընթացի մասով, որտեղ մեր կողմից ևս թույլ չի տրվել գնումների մասին օրենքով նախատեսված ընթացակարգերի խախտում, այլ թույլ տվեք եզրակացնեի որ ընդամենը կարող է

տեխնիկական ինչ ինչ պատճառներ եղած լինեն, որ այդ նամակը չի հասել պատվիրատուին և անկեղծ չենք մտածում որ այստեղ կա ինչ-որ մեկի դիտավորությունը, սակայն փաստացի մեր ընկերությունը կարող է ենթարկվել պատասխանատվության, մեղսագրվող արարքի մեջ չունենալով մեղք, ուստի գտնում եմ, որ նման դեպքում անթույլատրելի է որպեսզի «Արպանիվ» ՍՊԸ-ն ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Արպանիվ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/47» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Արպանիվ» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմումում, որպես ընկերության էլեկտրոնային փոստի հասցե է նշել arpaniv@mail.ru:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ է զբաղեցրել «Արպանիվ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջարկել «Արպանիվ» ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի էլեկտրոնային փոստից՝ lachgroup.procurement@gmail.com, 11.04.2019թ.-ին ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած «Արպանիվ» ՍՊԸ-ին (arpaniv@mail.ru) ծանուցումը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արպանիվ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և նույն արձանագրության 1-ին կետով որոշել է մերժել «Արպանիվ» ՍՊԸ-ի հայտը:

«Արպանիվ» ՍՊԸ-ի arpaniv@mail.ru էլեկտրոնային փոստի արտատպման համաձայն՝ Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին՝ lachgroup.procurement@gmail.com, 13.04.2019թ.-ին, սահմանված ժամկետում՝ աշխատանքային 3-օրյա ընթացքում, ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.05.2019թ. թիվ 26/26-1/8974-2019 գրությամբ «Արպանիվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ .... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/47» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Արպանիվ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 11.04.2019թ.-ին lachgroup.procurement@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից, «Արպանիվ» ՍՊԸ-ի arpaniv@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկվել ծանուցում, որով առաջարկվել է ուղարկել որակավորման փաստաթղթերը:

Մասնակիցը arpaniv@mail.ru էլեկտրոնային փոստից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին՝ lachgroup.procurement@gmail.com, 13.04.2019թ.-ին ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Տվյալ դեպքում մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ «Արպանիվ» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ քարտուղարի lachgroup.procurement@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից 11.04.2019թ.-ին ստանալով վերը նշված կարգի կետին համապատասխան ծանուցում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ 13.04.2019թ.-ին /3 աշխատանքային օրվա ընթացքում/ Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման փաստաթղթերը:

Տվյալ դեպքում առկա է «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը քարտուղարի համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու ապացույցը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը չի կարող համարվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արպանիվ» ՍՊԸ-ն չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.05.2019թ. թիվ 26/26-1/8974-2019 գրությամբ «Արպանիվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**